

ՕՐԵՆԱԴԻՐ

ՆՈՐԸՆՏԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ, ԵՆԹԱԴՐԱԲԱՐ, ԿԱՆՑԿԱՑՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀՐԱՊՈՐՏՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դեկտեմբերի 3-ին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակեց հոկտեմբերի 31-ին եւ նոյեմբերի 21-ին անցկացված խորհրդարանական ընտրությունների վերաջնական արդյունքները:

Օրենսդրության համաձայն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2020 թվականի խորհրդարանական ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից հետո, նախագահը նշանակելու է տասներորդ գումարման խորհրդարանի առաջին նիստը: Ամենայն հավանականությամբ, խորհրդարանի անդրամիկ նիստը կբացվի դեկտեմբերի 11-ին:

Տասներորդ գումարման խորհրդարանի առաջին նիստը կբացի Վրաստանի նախագահը: Նիստին մասնակցելու է նաեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը: Նիստը կվարի խորհրդարանի պատգամավորներից ամենատարեցը:

Առաջին նիստում պատգամավորները գաղտնի քվեարկությամբ կընտրեն խորհրդարանի նախագահին:

Հիշեցնենք, որ ընտրություններին մասնակից 48 կուսակցությունների եւ երկու ընտրաշինքներից ընտրաշինքը հաղթահարել էր ինը ընտրա-



կան տուբյեկտ, որոնց միջեւ բաշխվեցին համամասնական ընտրակարգով պատգամավորական 120 մանդատները: Ինչ վերաբերում է մեծամասնական ընտրակարգին, ապա բոլոր 30 ընտրատարածքներում հաղթեցին «Վրացական երազանքի» թեկնածուները: Հիշեցնենք, որ նոյեմբերի 21-ին 17 ընտրատարածքներում անցկացված մեծամասնական ընտրակարգով ընտրությունների երկրորդ փուլին ընդդիմությունը չմասնակցեց:

Այսպիսով, ըստ Կենտրոնական ընտրական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՐՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՆ Է

32 ՏԱՐԻ՝ ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

1988 թվական... դեկտեմբերի 7... ժամը՝ 11:41 րոպե...

Հայաստանի ժողովուրդը նորից ցնցում ապրեց, այս անգամ ստորգետնյա: Մի քանի վայրկյանների ընթացքում Հայաստանի հյուսիսային հատվածը վերածվեց ավերակների կույտի, նորից տասնյակ հազարավոր զոհեր, խեղանդամվածներ, անօթեւաններ... Կույր աղետի զոհ դարձան Սպիտակը, Գյումրին, Կիրովականը, Ստեփանավանը, մերձակա հարյուրավոր գյուղեր... Նորից ցավից տնքաց ու վշտից քարացավ հայը, բայց... այս անգամ կարծես մենակ չմնաց, օգնության ձեռք մեկնեցին վրացին ու ռուսը, լիտվացին ու լատիշը, ֆրանսիացին ու գերմանացին, էստոնացին ու ղազախը, գրեթե բոլորը, բոլորը...



32 տարի է անցել այդ ողբալի օրից, սպիացել են կարծես հայ ժողովրդի վերքերը, ավերակներից մաքրվել, շենացել քաղաքներն ու գյուղերը, ծնվել նոր սերունդներ... Արիացիր, ի՛նչ հայ ժողովուրդ...


Հայ ժողովուրդը հիշում ու խնկարկում է իր հազարավոր զոհերին, թեեւ ամեն անգամ երախտագիտությամբ հիշելով նրանց, ովքեր օգնեցին ապրել այս աղետը տեսած-վերապրածներին: Հիրավի, անամոքելի կմնար ցավը, եթե աշխար-

հի ողջ մարդկությունը օգնության ձեռք չմեկնեց: Իսկ առաջինը Վրաստանն էր ու վրաց ժողովուրդը...

Այսօր աշխարհի ողջ հայությունը ծաղիկների խոնարհումով հարգում է տարերային աղետի զոհերի հիշատակը:

COVID - 19

«ՍԱՐՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ ՎՐԱՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՆ Է»



Դեկտեմբերի 3-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը: Նիստում գործադիր անդրադարձավ երկրում կորոնավիրուսով վարակման դեպքերի տազմասայի ավելացման հարցին, ընդգծեց վարակի տարածումը կանխելու ուղիված միջոցառումների կարևորությունը:

Վարչապետի հայտարարությամբ, ներդրված սահմանափակումները անմիջականորեն ուղղված են վարակի տարածումը կանխելուն, կարելու է, որ քաղաքացիները ենթարկվեն սահմանափակումներին, որպեսզի վարակման ցուցանիշը նվազի:

Նրա հավաստմամբ, կորոնավիրուսի տարածման դեմ գործարկված երկամսյա սահմանափակումների նպատակն է՝ փետրվարին Վրաստանի բնակչությունը կարողանա վերադառնալ լիարժեք կյանք:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԲՅՈՒՋԵ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ Է՝ 18 ՄԻԼԻԱՐԴ 384,5 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ



Վրաստանի կառավարությունը երկրի օրենսդիր գլխավոր մարմնի հաստատմանը ներկայացրեց 2021 թվականի պետական բյուջեի վերջնական տարբերակը, որը ներառում է նաեւ համավարակի հետ կապված ծախսերը:

տակային աջակցությունը, բիզնեսի օժանդակությունը եւ էկոնոմիկայի նախապատրաստումը հետզհետեւ մասնավոր վերականգնմանը:

- Ինչպես գիտեք, մենք խորհրդարանում ներկայացրել ենք 2021 թվականի պետական բյուջեն, որը չափազանց կարելու փաստաթուղթ է: Դա մի փաստաթուղթ է, որով մենք պետք է ապրենք 2021թ., ֆինանսական փաստաթուղթ, որը սահմանում է, թե ինչպիսին կլինի երկիրը մեկ տարի հետո: Բյուջեն հավասարակշռված է, որի հիմնական նպատակն է՝ համավարակի դեմ պայքարը, բնակչության սոցիալական նպատակային աջակցությունը, բիզնեսի օժանդակությունը եւ էկոնոմիկայի նախապատ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

2021-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

2021 թվականի բյուջեի նախագծում, որն արդեն ներկայացվել է Վրաստանի խորհրդարան, նախատեսվում է հաջորդ տարվա հունվարից 1-ից կենսաթոշակի ավելացում:

Վրաստանի ֆինանսների նախարարության կողմից տարածած հաղորդագրության համաձայն, կենսաթոշակների նպաստավորման վրա ուղղված է 2,6 միլիոն լարի (նախորդ տարվա համեմատությամբ՝ 370 միլիոն լարիով ավելի), ինչն առաջացած է պետական կենսաթոշակային աճի ինդեքսավորման կարգի ներդրմամբ:

Օրենքի նախագծով, 2021 թվականի հունվարի 1-ից նախատեսված է, մինչեւ 70 տարեկան կենսաթոշակառուների կենսաթոշակը բարձրաց-

նել 20 լարիով եւ կասիմանվի 240 լարի, իսկ 70-ից բարձր տարիքի կենսաթոշակառուների կենսաթոշակը կավելանա 25 լարիով եւ կասիմանվի 275 լարի:

Կենսաթոշակային ինդեքսավորման աճի արդյունավետությունը 2021 թվականին կազմում է 210 միլիոն լարի, ինչպես նաեւ ընթացիկ տարվա հուլիսից՝ 70 եւ ավելի հասակի կենսաթոշակառուների թոշակի 30 լարիով աճի տարեկան արդյունքը

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ԿԱՎԵԼԱՆԱ 100 ԼԱՐԻՈՎ

Վրաստանի ֆինանսների նախարարության կողմից տարածած հաղորդագրության համաձայն, 2021 թվականի բյուջեի նախագծում նախատեսված է 2021 թվականի հունվարից, կարգավիճակ ունեցող ուսուցիչների աշխատավարձի հավելավճարն ավելացնել 100 լարիով:

Սեկնաբանելով 2021 թվականի բյուջեում ուսուցիչների աշխատավարձի հավելավճարի բարձրացման մասին տեղեկատվությունը, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ

սպորտի նախարարի տեղակալ Էկատերինե Դգեբուաձեն հայտարարեց.

«Չնայած տնտեսական մարտահրավերներին, առկա համա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆԱԴԻՐ

ՆՈՐԸՆՏԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ, ԵՆԹԱԴՐԱԲԱՐ, ԿԱՆՑԿԱՑՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հանձնաժողովի հրապարակած տվյալների, «Վրացական երազանք» կուսակցությունը համաձայնակցում է ընտրակարգով ստացած ձայների 48,22 տոկոսով կուրենա 60 համաձայնակցան եւ 30 մեծամասնական պատգամավոր, ընդհա-

մուրը՝ 90 պատգամավոր:

«Ազգային շարժում-Ուժը միասնության մեջ է» միացյալ ընտրադաշինքը ձայների 27,18 տոկոսով կուրենա 36 մանդատ, «Եվրոպական Վրաստանը» ձայների 3,79 տոկոսով կուրենա 5 մանդատ, «Չայրեմասերների ալյանսը» ձայների 3,14 տոկոսով՝ 4 մանդատ, «Գիրգի Վաշածե-

Ռազմավարությունը՝ շինարար» ձայների 3,15 տոկոսով՝ 4 մանդատ, «Գիրչին» ձայների 2,89 տոկոսով՝ 4 մանդատ, «Լեւոն» ձայների 3,15 տոկոսով՝ 4 մանդատ, «Քաղաքացիներ-Ալեկո Էլիսաշվիլին» ձայների 1,33 տոկոսով՝ 2 մանդատ, «Լեյբորիստական կուսակցությունը» ձայների 1 տոկոսով՝ 1 մանդատ:

ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ԾՆՆՈՒՄՆ ՕՐԸ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵՋ, ՉԱՐՈՒԹՅՈՒՆ

Վրաստանում Չայաստանի դեսպանության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի բաժնի ղեկավար Գարուբյուն Գարայանի ծննդյան օրն է:

«Վրաստան» թերթը, սիրով շնորհավորում է նրան: Գարուբյունը հենց այն երիտասարդն է, ում շնորհիվ ոչ միայն ստեղծվեց, այլև ակտիվացվեց դեսպանատան մամուլի ծառայության գործունեությունը նաև սոցիալական, օրինակ դառնալով տարբեր երկրներում Չայաստանի մյուս դեսպանությունների համար: Մենք վստահությամբ կարող ենք ասել, որ Վրաստանում Չայաստանի դեսպանությունն այդ առումով ոչ միայն առաջատարն է, այլև ամենաարհեստավարժը, ամենաօպերատիվն ու ընթերցվողը:



Նախքան Վրաստանում նշանակվելը, Գարայանը աշխատել է Սիրիայում Չայաստանի դեսպանատանը:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱԿԱ. «2021-ԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԱԶԱՏՎԵԼՈՒ Է ԳՈՒՅՔԱՅԱՐԿԻՑ»



Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնյանի հայտարարությամբ, 2021 թվականի ընթացքում զբոսաշրջության ոլորտը ամբողջովին կազատվի գույքահարկից:

Բացի այդ, զբոսաշրջության ոլորտում աշխատող ընկերությունները, 2021 թվականին կօգտվեն հարկային այլ արտոնություններից: - Զբոսաշրջության ոլորտը, որն ամենից շատ է տուժել է այս դժվարին ժամանակահատվածում, 2021 թվականին ամբողջությամբ կազատվի գույքահարկից: Նշենք նաև, որ այս ժամանակահատվածում, «Արտադրիչ Վրաստանում»

ծրագրի շրջանակներում, մենք սուբսիդավորել ենք 2200 փոքր եւ ընտանեկան հյուրանոցների բանկային վարկերի տոկոսները: Մենք որոշում ենք կայացրել ընդլայնել բանկային վարկի տոկոսների համաֆինանսավորման ծրագիրը եւ ավելացնել ռեստորանները, որոնց վեց ամսվա ընթացքում կսուբսիդավորենք բանկային վարկի տոկոսները,- հայտարարեց Նաթիա Թուրնյանը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ


ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿ ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ՝ ՀԱՎԱՃՈՒՄՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Վրաստանի կառավարությունը մշակել է արդեն խորհրդարանի հաստատմանն է ներկայացրել 2021 թվականի պետական բյուջեի նախագիծը: Հաջորդ տարվա բյուջեն, նախորդ տարվա բյուջեին գերազանցում է 221,9 մլն լարիով եւ կազմում է 18 384,5 մլն լարի:

Կառավարության հավաստմամբ՝ բյուջեն հավասարակշռված է եւ նկատի ունի երկրի համար կենսական նշանակության բոլոր հանգամանքները, մասնավորապես, 2021 թվականին Վրաստանի կառավարության ներկայացրած հակաճգնաժամային ծրագրի իրականացման համար նախատեսված է ծախսել 1 420,0 մլն լարի, ընդ որում, այդ գումարից 280 մլն լարի կծախսվի 2020 թվականին, իսկ 1 140 մլն լարի՝ 2021 թվականին:

Կառավարության հավաստմամբ՝ հակաճգնաժամային ծրագրով հատկացվող գումարները ներառում են առողջապահության, բիզնեսի աջակցության ծախսեր: Ինչպես նշեց վարչապետը, մասնավորապես, 450,0 մլն լարի կհատկացվի առողջապահության ոլորտի ֆինանսավորմանը, իսկ քաղաքացիներին սոցիալական օգնություն ցուցաբերելու համար հատկացված է 540,0 մլն լարի: Բիզնեսը կարգավորելու համար հատկացվել է, ընդհանուր առմամբ, 430,0 մլն լարի:

Վարչապետի հայտարարությամբ, դեկտեմբերի 3-ից սկսվում է միանվագ սոցիալական օգնություն, 300 լարի փոխհատուցում ստանալու համար էլեկտրոնային հայտերի ընդունումը: Ինչպես նշեց Գիրգի Գախարիան, ինքը ֆինանսների նախարարության արդեն առաջադրանք է տրվել, օգնությունը տրվի մինչեւ նոր տարի: Ավելացնենք, որ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հայտարարությամբ, հակաճգնաժամային տնտեսական ծրագրի չորրորդ փուլի շրջանակներում եկամուտների ծառայությունը մշակել է քաղաքացիների նպատակային սոցիալական օգնության գրանցման նոր ծրագրակազմ:



ՄԱԿ 47 ԵՐԿԻՐ ԿՐԱՅՆՎԻ ԾԱՅՐԱՐԵՂ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՄԱԿ-ի նոր զեկույցի համաձայն, համավարակի պատճառով, աշխարհի ամենաաղքատ երկրները կհայտնվեն ծայրահեղ աղքատության մեջ:

Փորձագետները կանխատեսում են իրավիճակի վատթարացում 47 երկրներում, որտեղ 32 միլիոն մարդու սպասվում է ծայրահեղ աղքատություն:

Ինչպես պարզվում է զեկույցից, չնայած նրան, որ պակաս զարգացած երկրները համավարակից տուժել են ավելի քիչ, քան սպասվում էր, 2020 թվականը այս երկրներում վերջին 30 տարվա ընթացքում տնտեսապես ամենադժվարն էր:

Տարեկան տնտեսական աճի ցուցանիշը կանխատեսված 5 տոկոսից ընկել է 0,4 տոկոսի:

ԱՄՆ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ ՄՏԱԴԻՐ Է ԱՐԳԵԼԱԿԵԼ ՈԱԶՄԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը քննադատել է Կոնգրեսին, որ 2021 ֆինանսական տարվա (սկսվել է հոկտեմբերի 1-ին) ռազմական բյուջեի՝ օրենսդիր մարմնի երկու պալատների կողմից համաձայնեցված նախագծում մնացել է հիշատակումը սոցիալական ցանցերը պատասխանատվությունից ազատելու մասին:

- Դա շատ վատ է մեր ազգային անվտանգության եւ ընտրությունների արդարության համար: Դրա լուծման վերջին շանսը: Ես վետո կկիրառեմ,- հայտարարեց Թրամփը:

Հիշեցնենք, որ 2021 ֆինանսական տարվա ռազմական բյուջեն պետք է կազմի 740 միլիարդ դոլար:

Մասնավորապես, նախատեսվել է Պենտագոնի բազային կարիքների համար 635,5 միլիարդ դոլարի հատկացում, 26,6 միլիարդ դոլար՝ ազգային անվտանգության բնագավառում էներգետիկայի նախարարության գծով ծրագրերի իրականացման համար: Արտասահմանում գործողությունների իրականացման համար հատկացվել է 69 միլիարդ դոլար:

2021-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Եւ կենսաթոշակային տարիքի բնակչության աճի ազդեցությունը՝ հաշվի առնելով ժողովրդագրական տվյալները: Կենսաթոշակների ավելաց-

ման մասին կառավարության որոշումն անդրադառնում է նաև բարձրալեռ բնակավայրերի՝ «Բարձր լեռնային շրջանների զարգացման մասին» օրենքով սահմանված արտոնություններից օգտվող բնակիչներին:

Մասնավորապես, բարձրալեռ բնակավայրերի մշտական բնակվող թոշակառուների համար՝ «Բարձր լեռնային շրջանների զարգացման մասին» Վրաստանի օրենքով նախատեսվում է թոշակի քանակի առնվազն 20 տոկոսի հավելավճար:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՋԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ԿԱՎԵԼԱՆԱ 100 ԼԱՐԻՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վարակի պայմաններում, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության գլխավոր առաջնահերթությունը մեր քաղաքացիների բարօրության մասին հոգալը եւ

որակյալ կրթության ապահովումն է: Համապատասխանաբար, Վրաստանի կառավարության որոշումը, որը նկատի ունի կրթության եւ գիտության գլխավոր առաջնահերթություն հայտարարելը եւ բյուջեի ամենամյա բարձրացում՝ մնում է ուժի մեջ:

2021 թվականի բյուջեում արդեն հաշվի է առնված, որ հաջորդ տարվա հունվարից լիարժեք ծանրաբեռնվածություն (15 ժամ) ունեցող ղեկավարի, առաջատար եւ մենտոր ուսուցչի աշխատավարձի հավելավճարը կբարձրանա 100 լարիով:

ՆԵՐԿՈՒՄԱԿԱՑՄԱՆ

ԶՈՒՐԱԲ ԶԱՓՈՐԻՉԵՆ ԹՈՂԵՑ «ԳԻՐԶԻՆ», ԻՍԿ ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԼՅԱՆՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալական ցանցում տարածվում է «Գիրչի» կուսակցության առաջնորդ Զուրաբ Զափարիձեի հայտարարությունը, որտեղ նշված է, որ Իսկո Խվիչիայի, Վախթանգ Մեգրելիշվիլու եւ Սանդրո Ռաֆվիաշվիլու հետ այլևս չի պատրաստվում «Գիրչի անել»:

Քարն առջեւում է,- հայտարարեց Զուրաբ Զափարիձեի: Ախաբալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի «Չայրեմասերների ալյանս» կուսակցության պատգամավոր Սամվել Պետրոսյանը լքել է իր կուսակցության խմբակցությունը: Նա խմբակցության անդամներին մեղադրում է, որ ընտրություններում նրանք աշխատել են հոգուտ այլ կուսակցության:

Յոթնամյա ընտրությունների համաձայն, Սամվել Պետրոսյանն այս որոշումը կայացրել է Վրաստանի խորհրդարանի ընտրություններից հետո, որտեղ նա առաջադրվել էր հենց այս կուսակցության ընտրացուցակներով:

«Ցանկանում եմ, փոխանցել հակիրճ տեղեկություն: Ցավոք, մի կողմից իմ, իսկ մյուս կողմից՝ Իսկոյի, Վախտյի եւ Սանդրոյի ճանապարհները բաժանվեցին: Ես չեմ պատրաստվում նրանց հետ «Գիրչիում» աշխատել բազմաթիվ պատճառներով, բայց ոչ՝ Իսկոյի հայտարարության համար: Դեռևս պատճառների մասին հրապարակավ չեմ կարող խոսել, ցավոք, կյանքում լինում են նաև նման դեպքեր: Հաջողություն եմ մաղթում նրանց:

Նշենք, որ Սամվել Պետրոսյանի սույն որոշումը հարցակազմի տակ է դնում սակրեբուլոյում այդ կուսակցության խմբակցության անկայությունը: Ավելացնենք, որ Սամվել Պետրոսյանը, սակրեբուլոյում թողնելով «Չայրեմասերների ալյանս» խմբակցությունը, շարունակում է մնալ կուսակցության շարքերում:

Ներողություն եմ խնդրում ձեզանից այդ պատճառով, գիտակցում եմ, որ ողջ պատասխանատվությունն իմ ուսերին է: Զեմ պատրաստվում կանգ առնել,- Գիրչիի» գլխավոր պայ-

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍԱՆ - ՆԱՏՕ

ԱՆՅԱՆԱԸ ՈՒԺԵՂԱՅՆՈՒՄ Է ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դեկտեմբերի 2-ին, Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Ջակալիանին մասնակցեց Վարշավայում անցկացված ՆԱՏՕ-ի արտաքին գործերի մի-նիստերիալին: Մինիստերիալին ղեկավարեցին Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սեծոկյան տարածաշրջանում, ինչպես նաև Վրաստանի եւ Ուկրաինայի նկատմամբ Ռուսաստանի ապակայունացող քաղաքականության հարցերը:

Մինիստերիալի ավարտից հետո Դավիթ Ջակալիանու եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգի համատեղ մամուլի ասուլիսում, այլապես ներկայացուցիչը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն ուժեղացնում է գործնական եւ քաղաքական աջակցությունը Վրաստանին:

Վրաստանն ու Ուկրաինան ՆԱՏՕ-ի արժեքավոր գործընկերներն են եւ զգալի ներդրում ունեն առաքելություններում: Մենք քննարկել ենք դրանց բարե-


փոխումների օրակարգը եւ ամրապնդում ենք գործնական եւ քաղաքական աջակցությունը: Ես ուրախ եմ, որ դաշնակիցներն ու Վրաստանը հավանություն են տվել նորացված էական փաթեթի ընդունմանը:

Նախարարները պայմանավորվեցին լրացուցիչ քայլեր ձեռնարկել տարածաշրջանում իրավիճակի մասին ավելի իմանալու եւ երկու գործընկերների հետ երկխոսությունն ամրապնդելու համար,-

հայտարարել է Ստոլտենբերգը:

Իր հերթին, Վրաստանի ԱԳ նախարարը հայտարարեց, որ բոլոր ճանաչում են Վրաստանի ձեռքբերած առաջընթացը եւ միաձայն ասում, որ Վրաստանն ունի ՆԱՏՕ-ին անդամակցելու բոլոր գործիքները, եւ որ Վրաստանն իրականում արդեն գործում է որպես դաշնակից:

Գործողությունների պլանը ՆԱՏՕ-ին ինտեգրվելու ճանապարհին կարելու ուղղություններից մեկն է, բայց այս ուղղությամբ նույնպես բոլորը նշում են, որ Վրաստանի տարեկան ազգային ծրագիրը իրականում պարունակում է գործողությունների ծրագրի ամենակարեւոր եւ արդիական տարրերը,- նշեց Դավիթ Ջակալիանին:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ՝ 3,9 ՏՈՒՆ

Վրաստանի վիճակակազրության ազգային գործակալության տվյալներով, հոկտեմբերին երկրի տնտեսությունը նվազել է 3,9 տոկոսով: Հունվար-հոկտեմբեր ամիսներին տնտեսության միջին իրական աճը բացասական է եւ կազմում է 5,1 տոկոս:

Անկման միտումը նկատվում է գրեթե բոլոր ոլորտներում, բացառությամբ՝ ֆինանսական գործունեության: Հատկապես ուշագրավ են տրանսպորտի, հյուրանոցների եւ ռեստորանների, ինչպես նաև շինարարության, արվեստի, զվարճանքի եւ ժամանցի, ինչպես նաև վերամշակող արդյունաբերության ոլորտների կրճատումները:

Հոկտեմբեր ամսին ապրանքի արտահանումը նվազել է 2,2 տոկոսով, ներկրումը՝ 23,5 տոկոսով: Ընթացիկ տարվա 10 ամսում արտահանման քանակը նվազել է 11 տոկոսով, իսկ ներկրումը՝ 17 տոկոսով:

ՄԱՐՏԵՆ Է ԿՈՐԱ ԴՎԿԻԹԱՇՎԻԼԻՆ

49 տարեկան հասակում մահացել է Կորա Դավիթաշվիլին:



Կորա Դավիթաշվիլին ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի միջազգային իրավունքի բաժինը եւ տնտեսագիտության ֆակուլտետը՝ բիզնեսի կազմակերպման եւ կառավարման մասնագիտությամբ: Կորա Դավիթաշվիլին մի քանի գումարման խորհրդարանի անդամ էր, ինչպես նաև Թբիլիսիի քաղաքային խորհրդի անդամ էր 2010-2012 թվականներին:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԱԿՈՒ ՄԵԼԻՔ-ԲԱՍՏԱՄՅԱՆԻ ԹՈՒՆՈՒՇԻ ՄԱՐԻԱ ՖԻԼԻՆԱՆ՝ ՎՐԱՍԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԱԿԻՑ» ՏԻՏՂՈՍԱԿԻՐ



Հանդուրժողականության միջազգային օրվա առիթով, Վրաստանի ժողովրդական պաշտպանի գրասենյակում անցկացվեց ավանդական միջոցառում, որի ընթացքում ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների ու կրոնական խորհուրդներն ընտրեցին տարվա հանդուրժողականության աջակից անձնավորություններին, կազմակերպություններին, լրատվամիջոցներին եւ հանրային պաշտոնյաներին, ովքեր տարվա ընթացքում նշանակալից ավանդները ցուցաբերեցին ազգային եւ կրոնական փոքրամասնությունների պաշտպանության եւ հանդուրժողականության մշակույթի հաստատման գործում:

Ազգային փոքրամասնությունների եւ կրոնական խորհուրդների որոշմամբ, 2020 թվականին հանդուրժողականության եւ ազգամիջյան հարաբերությունների գործում ներդրած ավանդի համար՝ «Հանդուրժողականության աջակից» տիտղոսը շնորհվեց Վրաստանի ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի վաստակավոր անդամ Մարիա Ֆիլինային:

Մարիա Ֆիլինան Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի պրոֆեսոր է, երկար տարիներ զբաղվում է վրաց-լեհական եւ վրաց-ռուսական գրական կապերի, ինչպես նաև Վրաստանում եւ ողջ Կովկաս-

ում լեհական ժառանգության ուսումնասիրությամբ: 1995 թվականին Մարիա Ֆիլինան հիմնեց եւ գլխավորեց Վրաստանի լեհական մշակութային-բարեգործական «Պոլոնիա» միությունը:

Մայրական կողմից Մարիա Ֆիլինան Կովկասում պանրի պատրաստման առաջին գործարանի հիմնադիրն է, Թբիլիսիում Կամոյի հայկական դպրոցի հովհանավոր Հակոբ Մելիք-Բախտանյանի թոռնուհին:

«Վրաստան» թերթը շնորհավորում է տիկին Մարիա Ֆիլինային 2020 թվականի «Հանդուրժողականության աջակից» տիտղոսի շնորհման առիթով, մաղթում քաջառողջություն եւ արգասաբեր հասարակական եւ գիտական գործունեություն:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է 60 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՈՎ

Վրաստանի ֆինանսների նախարարության կողմից տարածած հաղորդագրության համաձայն, 2021 թվականի բյուջեի նախագծով, աշխատանքի վարձատրության բյուջեն ավելացել է 60 մլն լարիով եւ կազմում է 1 614 671,1 հազար լարի, որը հիմնականում ծառայելու է ոստիկանության եւ զորքի աշխատավարձերի փոխհատուցմանը:

Գերատեսչության փոխանցմամբ, ինչպես հայտնի է, ոստիկանության եւ զորքի աշխատավարձն ավելացել է ընթացիկ տարվա կեսին եւ 2021 թվականին հաշվի առնված գումարը ծառայելու է նրանց աշխատավարձերի փոխհատուցմանը հետագա տարվա ընթացքում:

Ֆինանսների նախարարությունում հայտարարում

են, որ 2021 թվականի բյուջեի նախագծով այլ գերատեսչություններով հանրային ծառայողների աշխատավարձի բարձրացում չի նախատեսվում:

2021 թվականի աշխատանքի վարձատրության բյուջեն ավելացել է 60 մլն լարիով եւ ծառայելու է ոստիկանության եւ զորքի աշխատավարձերի փոխհատուցմանը:

ԱՅՍ ՏԱՐՎԱ ԲՅՈՒՋԵԻ ԱԶԱՏՎԱԾ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒՂՂՎՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԿԱՐԱԿԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ

Վրաստանի ֆինանսների նախարարությունը լրացուցիչ պարզաբանումներ է տալիս աուդիտորական ծառայության զեկույցի վերաբերյալ իրապարակված տեղեկատվության մասին:

Նախարարությունը նշում է, որ տեղեկատվությունը սխալ է, իբր, այս տարի միջոցները չեն յուրացվել, եւ ռեսուրսների անարդյունավետ օգտագործման ռիսկեր կան:

«Բյուջեի ծախսերի վերաբերյալ իրական պատկերը հետեւյալն է. Համաճարակի պայմաններում, պետական ռեսուրսներն առավել օգտագործելու համար, այս տարի պետբյուջեում կատարվեցին փոփոխություններ, որոնք 600 միլիոն լարիով կրճատեցին բյուջեի ծախսային մասը եւ կրճատվեց այն ծրագրերի ֆինանսավորումը, որոնց յուրացումը չի հաջողվել ներդրված սահմանափակումների պատճառով եւ միջոցներն օգտագործվեցին հնարավորինս՝ համաճարակի դեմ պայքարի համար անհրաժեշտ տարրեր միջոցառումներ ֆինանսավորելու համար՝ ինչպես սոցիալական, այնպես էլ առողջապահական ոլորտում:

Տարածաշրջանում ընթացող գործընթացների,

ինչպես նաև այն փաստի պատճառով, որ 2020 թվականի սեպտեմբերից Վրաստանում, ինչպես նաև Եվրոպայի եւ աշխարհի շատ երկրներում զգալիորեն աճել է COVID-19 համավարակի տարածվածությունը եւ վարակվածների թիվը, այս միտումը շարունակվում է նաև այսօր, բյուջեի ծախսերն ընթացում են առավել սահմանափակումներով, որպեսզի գործող տնտեսությունները մի կողմից ծախսվեն հակաճգնաժամային միջոցառումների վրա, իսկ մյուս կողմից՝ բյուջեի դեֆիցիտը կրճատում են մինչև տարեվերջ:

Այս որոշումը կհանգեցնի, որ պետության համար մատչելի բոլոր կարելու ֆինանսական ռեսուրսներն ուղղվեն համավարակի դեմ պայքարին եւ բնակչության սոցիալական ու առողջապահական միջոցառումներին աջակցությանը,- հայտարարում են ֆինանսների նախարարությունում:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-28-Ը RS CAR-Ը ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ ԿՄՊԱՍԱՐԿԻ 27 ՎԱՅՐԵՐՈՒՄ

Դեկտեմբերի 1-28-ը, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության շարժական սերվիսներում RS CAR-ը հարկատուներին սպասարկումներ կմատուցի երկրի տարածքի 27 վայրերում, այն երկրամասերում, որտեղ տեղակայված չեն եկամուտների ծառայության սերվիս-կենտրոնները:

RS CAR միկրոավտոբուսը հազեցած է եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններում առկա տեխնիկական միջոցներին համապատասխան: Հարկատուները կարող են իրենց հարմար ժամանակահատվածում, առանց բնակավայրից դուրս գալու, ժամանակին ստանալ ցանկալի սպասարկում:

Եկամուտների ծառայության RS CAR շարժական սերվիս-կենտրոնը դեկտեմբերի 8-ին Թբիլիսիում, Թամար թագուհու թիվ 34-ում, վարչության հարակից տարածքում, դեկտեմբերի 15-ին կգործի Ասպինձայում, Թամար թագուհու փողոցում, «TBC բանկի» հարակից տարած-

քում, դեկտեմբերի 16-ին՝ Նինոծմինդայում, Պուշկինի փողոցում, վարչության շենքի հարակից տարածքում:

Նշենք, որ բոլոր վերոնշյալ վայրերում շարժական RS CAR սերվիս-կենտրոնները կգործեն ժամը 10:00-17:00-ը:



ԲՅՈՒՋԵ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՌԵԿՈՐԴԱՅԻՆ Է՝ 18 ՄԻԼԻԱՐԴ 384,5 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րաստունը հետճգնաժամային վերականգնմանը: Սա այն բյուջեն է, որի վրա մենք աշխատել ենք Արտարժույթի հիմնադրամի հետ: Ներկայացվում է հավասարակշռված բյուջե, որը ներառում է բոլոր հիմնական բաղադրիչները, որոնք էական են ճգնաժամի պայմաններում, որոնք անհրաժեշտ են համաճարակի դեմ պայքարելու և տնտեսական ճգնաժամը հաղթահարելու համար:

Ինչպես գիտեք, մենք հայտարարել ենք բնակչության սոցիալական, նպատակային և բիզնեսի աջակցության չորրորդ փուլի մասին, որի հիմնական ծավալը 420 միլիարդ է, որից 280 միլիարդը նախատեսված է 2020 թվականի համար, իսկ մնացած 140 միլիարդը՝ սահմանված է 2021 թվականի բյուջեում: Այս ցուցանիշների հիմնական ուղղությունը, առաջին հերթին, առողջապահությունն է՝ հաջորդ տարվա բյուջեում լրացուցիչ սահմանված է 450 միլիարդ լարիով, որի հիմնական ծախսերն են կորոնավիրուսի բուժումը, թեստերը, պատվաստումները և պատվաստումներին պատրաստվելը, ինչպես նաև պատվաստանյութերի գնումը և, իհարկե, վիրուսի տարածման կանխումը: Հաջորդ տարվա բյուջեն նախատեսված է 540 մլն լարի՝ նպատակային աջակցության համար և 430 մլն լարի՝ բիզնեսի աջակցության համար, - ընդգծեց Գիտության Գախարհի:

Նշենք, որ 2021 թվականի պետական բյուջեի ծախսերի ծավալը, համե-

մատած 2020 թվականի հաստատված բյուջեի հետ, աճել է 221,9 մլն լարիով և կազմում է 18 384,5 մլն լարի, որտեղից, ծրագրի համաձայն, ավելի քան 890 մլն լարի ուղղվելու է նոր կորոնավիրուսի համավարակի հաղթահարման և դրա պատճառած ճգնաժամի դեմ:

Միևնույն ժամանակ, ի տարբերություն պետական բյուջեի նախնական տարբերակի, որում 2021 թվականին կանխատեսում էր 5 տոկոսի սահմաններում տնտեսական աճ, բյուջեի նախագծի վերջնական տարբերակում նշված է, որ, նոր կանխագծումների համաձայն, 2021 թվականին իրական համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) աճը սպասվում է 4,3 տոկոսի սահմաններում, իսկ միջնաժամկետ կտրվածքով՝ միջինը 5,5 տոկոսի սահմաններում: Նախագծի բացատրագրում նշված է, որ տարվա բյուջեն ծրագրված էր տնտեսական իրական աճի 4,5 տոկոսի սահմաններում կանխատեսված ցուցանիշով, սակայն, ելնելով «Կովիդ 19»-ի համավարակի տարածումից «Վրաստանի 2020 թվականի պետական բյուջեի մասին» Վրաստանի օրենքում իրականացրած փոփոխությունների, 2020 թվականի ընդհանուր ներքին արտադրանքի փոփոխությունը սահմանվել է միևնույն չորս տոկոսով: Բացի այդ, համավարակի էլ ավելի սրման պատճառով, անկման տեմպերն ավելի են աճել:

«Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին «Կովիդ 19»-ի դեպքերի զգալի աճը և ընթացիկ տարվա նոյեմբերի 28-ից տնտեսության տարբեր ճյուղերում գործու-

նության սահմանափակումը, շարունակում են բացասական ազդեցություն ունենալ տնտեսական աճի վրա: Հաշվի առնելով վերոնշյալը և արժույթի միջազգային հիմնադրամի հետ խորհրդակցությունները, 2020 թվականին սպասվում է ՀՆԱ-ի անկում՝ հինգ տոկոսի շրջանակներում»,- ասվում է նախագծում:

Ինչ վերաբերում է բյուջեի հարկային եկամուտներին, ապա, 2021 թվականի նոր կանխագծումների համաձայն, բյուջեի հարկային եկամուտները կկազմեն 12,045,0 մլն լարի, ինչը 155 մլն լարիով պակաս է 2021 թվականի պետական բյուջեի առաջին տարբերակից: Նախագծից կցված բացատրագրում նշված է, որ կրճատումը պայմանավորված է հարկային արտոնությունների կիրարկմամբ, որոնք սպասվում են մասնավոր հատվածի համար հակաճգնաժամային ծրագրի նոր փուլի շրջանակներում:

Ըստ նախագծի, 2021 թվականի ավարտին «Տնտեսական ազատության մասին» Վրաստանի օրգանական օրենքով որոշված կառավարության պարտքը որոշվում է ՀՆԱ-ի 60,1 տոկոսով: Ինչ վերաբերում է պետական պարտքի առավել չափին, ապա, 2021 թվականի վերջին այն որոշվել է 33,680,1 մլն լարի, այդ թվում՝ պետության արտաքին պարտքը՝ 27,734,2 մլն լարի, իսկ պետական ներքին պարտքը՝ 5,945,8 մլն լարի: Ինչպես նշվում է պետբյուջեի նախագծի բացատրական գրութային մեջ, հետագա տարիներին պարտքը փոքր-ինչ կնվազի, և 2024 թվականին այն կկազմի ՀՆԱ-ի 57,6 տոկոսը:

ՁԱՆԳԵՔ, ԵԹԵ ԱՆՂՐԱՍԵՆՏՏ Է ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԹԵՃ ԳԾԵՐԸ

Երկրում տիրող համավարակային իրավիճակը «ստիպեց» կրկին սահմանափակումներ մտցնել: Միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, ամբողջ երկրի տարածքով տեղաշարժը ժամը 21:00-ից 05:00-ը ինչպես հետինում, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցների համար, ինչպես նաև հասարակական տարածքում գտնվելն արգելվում է, բացառություն է Ամառոտի գիշերը՝ դեկտեմբերի 31-ին և Սուրբ Ծննդյան տոնին՝ հունվարի 6-ին: Սակայն այս սահմանափակումը միակը չէ:



Սահմանափակումների ընթացքում տեղաշարժի թույլտվություն ստանալու համար պատասխանատու է կառավարության թե՛ գիծը: Հրապարակվեց նաև անենահրատապ դեպքերի ժամանակ զանգահարելու հեռախոսահամարները: Այսպիսով.

- 112՝ շտապ օգնություն և ընտանիքի բժիշկ, 15 05՝ առցանց կլինիկա,
- 114՝ սահմանափակումներ,
- 144 (1)՝ ժամանակավոր թույլտվություն,
- 116 001՝ թեստեր, պատվաստումներ, 0322 501 105՝ հոգեբանի խորհրդակցություն:
- Ինչպես նաև թույլտվություն ստանալու համար առանձին գործակալություններին կապահարկեց առանձին նախարարություններ, օրինակ՝ - Հացի փոշերը, կաթի վերամշակման գործարանները և այլ սննդամթերքի արտադրողները պետք է դիմեն Գյուղատնտեսության նախարարությանը:
- Բնապահպանության և գյուղատնտեսության նախարարություն
- Թե՛ժ գիծ՝ 1501
- Էլ.փոստ՝ maia.ghavtadze@mepa.gov.ge
- Կլինիկաները, դեղատները և բոլոր կազմակերպությունները, որոնք զբաղված են մարդու առողջության հետ կապված գործունեությամբ, պետք է դիմեն Առողջապահության նախարարությանը:
- Առողջապահության նախարարություն
- Թե՛ժ գիծ՝ 15 05
- Այն շինարարական ընկերությունները, որոնք իրականացնում են պետական կամ մունիցիպալ նախագծեր, պետք է դիմեն Ենթակառուցվածքների նախարարությանը:
- Ենթակառուցվածքների նախարարություն
- Թե՛ժ գիծ՝ 277 90 90
- Էլ.փոստ՝ sashvi@mrdis.gov.ge
- Շինարարության հետ կապված գործունեություն ծավալող այլ ընկերությունները պետք է դիմեն Էկոնոմիկայի նախարարությանը:
- Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն
- Թե՛ժ գիծ՝ 1403; 032 299 11 61; 032 299 11 11
- Էլ. փոստ՝ permit@moesd.gov.ge
- Մենք ներկայացնում ենք նաև որոշ այլ հաստատությունների կոնտակտային տվյալները.
- Կրթություն՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- Թե՛ժ գիծ՝ 2 200 220
- Էլ.փոստ՝ gkochishvili@mes.gov.ge
- Արտաքին գործերի նախարարություն
- Թե՛ժ գիծ՝ 322 94 50 50
- Էլ. փոստ՝ consulinfo@mfa.gov.ge
- Թբիլիսիի քաղաքապետարան, հեռախոսահամար՝ 272 22 22, Էլ.փոստ՝ info@msda.ge
- Եկամուտների ծառայություն, հեռախոսահամար՝ 032 229 92 99, Էլ.փոստ՝ info@rs.ge.

ՌԻՍ ԵՎ ՈՐՔԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ

Թերթի նախորդ համարում հրապարակել էինք Վրաստանի կառավարության հակաճգնաժամային ծրագրով քաղաքացիների առանձին կատեգորիաների նախատեսված նյութական օգնության մասին տեղեկատվությունը: Թեպետ, դատելով խմբագրության էլեկտրոնային փոստով ստացվող հարցումներից, շատերի համար այդ հարցում մնացել են որոշ հարցականներ: Դրա կարգավորման նպատակով, ներկայացնում ենք վերոնշյալ ծրագրի մանրամասները:

Հիշեցնենք, որ Վրաստանի կառավարությունը կորոնավիրուսի համավարակի հակաճգնաժամային ծրագրի 4-րդ փուլի շրջանակներում հայտարարել էր, որ քաղաքացիների համար հոգածության ծրագրի վրա կծախսվի 545 միլիոն լարի: Ընդհանուր առմամբ, ավելի քան 500 հազար մարդ կկարողանան օգտվել փոխհատուցումից՝ չհաշված այն քաղաքացիները, ովքեր կօգտվեն կոմունալ ծախսերի սուբսիդավորումից:

Այսպիսով, նոյեմբեր ամսից փետրվարը ներառյալ, 4 ամիսների ընթացքում, կոմունալ ծախսերը կսուբսիդավորվեն այն քաղաքացիներին, ովքեր սպառել են 200 կվտ-ից պակաս էլեկտրաէներգիա և 200 խոր.մ-ից պակաս բնական գազ: Կառավարության այս ծրագրից կօգտվի մոտավորապես 1 միլիոն ընտանիք: Ծրագրի իրականացման համար նախատեսված է 270 միլիոն լարի:

Հակաճգնաժամային ծրագրի հաջորդ կետը վերաբերում է պաշտոնապես աշխատողները, այսինքն՝ նրանց, ովքեր եկամտահարկ են վճարում, և ովքեր ժամանակավորապես կորցրել են իրենց աշխատատեղը: Նրանք 2021 թվականին, 6 ամսվա ընթացքում, ամեն ամիս կստանան 200 լարի օգնություն: Նման մարդկանց մոտավոր թիվը, ովքեր կօգտվեն տվյալ ծրագրից, 125 000 է: Ծրագրի բյուջեն կազմում է 150 միլիոն լարի:

Ծրագրով նախատեսված է օգնություն նաև՝ այն հաստատությունների աշխատակիցներին և այն անհատ ձեռներեցներին, ովքեր 2020 թվականի դեկտեմբերին և 2021 թվականի հունվարին ներդրված սահմանափակումների հետևանքով եկամուտ չեն ստանա: Այդ կատեգորիայի քաղաքացիները կստանան 300 լարիի չափով միանվագ օգնություն: Ծրագրի այդ կետից կարող է օգտվել շուրջ 100 հազար մարդ, իսկ դրա համար բյուջեում նախատեսված է 30 միլիոն լարի:

Հակաճգնաժամային ծրագրով նախատեսված է նաև 600 լարիի չափով փոխհատուցում՝ սոցիալական գործակալության սոցիալապես կարիքավորների ցուցակում հաշվառված սոցիալապես անապահով ընտանիքներին, ում վարկանիշային միավորը 65 000-ից 100 000 է: Դրանք պետությունից վեց ամսվա ընթացքում կստանան 100 լարի (փոխհատուցման գումարը պայմանավորված է ընտանիքի անդամների քանակով) նպաստ: Այս ծրագրից կօգտվի մին-

չե 72 000 ընտանիք (220 000 անձ), իսկ բյուջեն նախատեսված է 55 մլն լարի:

Օգնություն կստանան նաև 0-ից 100 000 միավոր ունեցող բազմազգավակ ընտանիքները, ովքեր ունեն երեք կամ ավելի անչափահաս, մինչև 16 տարեկան երեխաներ: Դրանք վեց ամսվա ընթացքում պետությունից նույնպես կստանան 100 լարի օգնություն: Այս օգնությունից, կանխագծումների համաձայն, կօգտվի 24 000 ընտանիք: Բյուջեն 15 միլիոն լարի է:

Վեց ամսվա (հունվարից մինչև հունիս) ընթացքում 100 լարի օգնություն կստանան մինչև 18 տարեկան սահմանափակ հնարավորություններ ունեցող անձինք: Այս ծրագրից կօգտվի 43 000 մարդ: Բյուջեն կազմում է 27 միլիոն լարի:

Հակաճգնաժամային ծրագիրը նախատեսում է արտոնություններ նաև բանկերից վարկեր վերցրած անձանց համար: Մասնավորապես, կիտեմադվեն այն անձանց վարկերը, ովքեր կորցրել են իրենց եկամուտներն այն պատճառով, որ աշխատում են այն հաստատություններում, որոնց աշխատելու իրավունքը սահմանափակվել է 2020 թվականի դեկտեմբերի և 2021 թվականի հունվարի նոր սահմանափակումներով:

Խմբագրության փոստով ստացված հարցումներում շատ են տեղաշարժի սահմանափակումների մասին հարցերը: Ինչպես արդեն հաղորդել ենք, կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով, Վրաստանի կառավարությունը նոյեմբերի 28-ից մի շաբթ արգելքներ սահմանեց երկրում: Ողջ երկրի տարածքով նոյեմբերի 28-ից մինչև հունվարի 31-ը կգործի փաստացի «պարետային ժամ», բացառություն են կազմում միայն Ամառոտի և Սուրբ Ծննդի գիշերը:

Ինչ վերաբերում է խիստ անհրաժեշտության դեպքում ժամը 21:00-ից տեղաշարժերին, ապա, Վրաստանի կառավարության պարզաբանմամբ, եթե կա անհետաձգելի անհրաժեշտություն, պետք է զանգահարել կառավարությունում գործող հատուկ՝ 14 41 թե՛ժ գիծ, որով հնարավոր կլինի ձեռք բերել մեկնազամյա հատուկ թույլտվություն: Ինչ վերաբերում է թույլտվության ժամկետին, այն պայմանավորված կլինի անհրաժեշտությամբ և կտրվի դրան համապատասխան: